

գողնայ՝ բուրն ալ պատժելու համար: Ինք պարզապես երկնառաք պատժարար մըն է: Ահաւոր է թիւրիմացութիւնդ, երբ կը կարծես, որ ան ազնիւ ու ազնուական չէ: Դուրսէն աղջիկ չառնէր ու գրեթէ դուրսը աղջիկ չի տար, որպէսզի չմամկանայ իր արիւնը: Եթէ բուրն Զայերը իրեն նման ըլլային, ազգը այս վիճակին մէջ չէր ըլլար այսօր: Կը նախընտրեմ ամնողը, քան ինդրողը:

Ներսը նստող բարեկամս ըսաւ.

-Ես ներսէն քննած եմ ամէն բան, իսկ դուն՝ դուրսէն...

-Եղբայր, գիտեմ, որ ներքին քննութիւն մը անելի արժէք կը ներկայացնէ, սակայն, ՉԷՆԿԻԼԵՐԳԻՆ ամէն բանը դուրսն է: ՉԷՆԿԻԼԵՐԳԻՆ պէտք է դուրսէն քննել, որովհետեւ իր ներսը դուրս տուած է:

Ներսը նստած բարեկամս լռած էր: Նայեցայ, որ կը խուզարկէ գրպանները: Զարցուցի.

-Ի՞նչ կայ, ինչո՞ւ կը խուզարկես գրպաններդ...

Ըսաւ.

-Կը նայիմ, որ ամէն բան տե՞ղն է: Կասկած ունեցայ, քանզի ՉԷՆԿԻԼԵՐԳԻՆ խօսք եղաւ...

Այս արդէն չափազանցութիւն էր: «Մարդուս անունը ելլելուն՝ աչքը ելլէ», - կ'ըսէ ժողովուրդը: Սակայն երբեք պիտի չփափաքէի, որ ՉԷՆԿԻԼԵՐԳԻՆ աչքը ելլէ: Թող որ, եթէ նոյնիսկ ելլէ, ՉԷՆԿԻԼԵՐԳԻՆ կրնայ շուտով մէկուն բիրը թոցնել եւ դնել իր ելած աչքին տեղը:

*

Եթէ դուրսէն իրեն նայիս, ՉԷՆԿԻԼԵՐԳԻՆ կը նմանի գինովի, իսկ եթէ ներսէն իրեն նայիս, ՉԷՆԿԻԼԵՐԳԻՆ կը նմանի գինետունի:

Եթէ դուրսէն իրեն նայիս, կը տեսնես, որ ՉԷՆԿԻԼԵՐԳԻՆ մէջ շատ զօրաւոր է հայրենակցական կապը. եթէ իրեններէն մէկը հիւանդանայ, ամէն ճիգ ի գործ կը դնէ՝ պառկողը ոտքի հանելու համար: Իսկ եթէ ներսէն իրեն նայիս, կը տեսնես, որ ամէն կապ զօրաւոր է իր մէջ: Կը տեսնես նաեւ, որ իր հիւանդ պառկած հայրենակիցը ոտքի հանելէն վերջ, կը ջանայ զայն պարկը խոթել, որպէսզի ա՛լ բնաւ պաղ չառնէ: